Sil Mobile հավելվածի արշավի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1 «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ բոլոր հաճախորդների համար իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.3 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

1.5 Արշավի բաղկացուցիչ մաս է գովազդային վիճակախաղը, որտեղ պատահականության սկզբունքով ընտրվում են շահող մասնակիցներ:

1.6 Արշավի անցկացման աշխարհագրություն՝ Հայաստանի Հանրապետություն:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Հաճախորդների համար իրականացվող Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տեղադրվում է www.silinsurance.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Արշավի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Արշավի շրջանակում Պարգևատրումները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

2.4 Արշավին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.5 Արշավի մասնակիցը հաստատվում է Կազմակերպչի կողմից՝ Հաճախորդի նախատեսված տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը: Եթե Հաճախորդը հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ կա տվյալների անհամապատասխանություն, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Արշավի մասնակցության նպատակով սույն թվականի մայիսի 6-ից մինչև սույն թվականի հուլիսի 20-ը ներառյալ Հաճախորդները պետք է՝

- Ներբեռնեն Sil Mobile հավելվածը (այսուհետ՝ Հավելված) համապատասխանաբար ստորև հղումներից՝

Download on the App Store

GET IT ON Google Play

- Գրանցվեն և անցնեն նույնականացում Հավելվածում՝ նշված ժամանակահատվածում,
- Ունենան առնվազն մեկ գործող պայմանագիր կամ գործող պայմանագրով լինեն ապահովագրված անձ:

3.2 Արշավի պայմաններին բավարարած յուրաքանչյուր հաճախորդ ներառվում է խաղարկության մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ):

3.3 Ցուցակում ներառվելու համար հիմք է ընդունվում Հավելվածում նույնականացման ամսաթիվը: Հավելվածում նույնականացումը իրականացվում է գրանցումից հետո առավելագույնը 24 ժամվա ընթացքում:

3.4 Ցուցակում չեն ներառվում Ընկերության աշխատակիցները և վերջիններիս Ընտանիքի անդամները (սույն պայմանների իմաստով ընտանիքի անդամներ են համարվում՝ կին, ամուսին, ծնողներ, կնոջ/ամուսնու ծնողներ, մինչև 27 տարեկան զավակներ):

3.5 Հաղթողների ընտրության օրը կհայտարարվի հուլիսի 20-ից հետո հինգօրյա ժամանակահատվածում՝ ընտրության օրվանից առնվազն 2 օր առաջ տեղեկատվությունը տեղադրվելով Ընկերության պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

3.6 Խաղարկության նվերներից «Sil CheckUp Plus»-ը տրամադրվում է հաղթողին կամ, վերջինիս ընտրությամբ, իր Ընտանիքի մեկ անդամի՝ մեկ տարի ժամկետով:

3.7 Խաղարկության նվերներից «Safe Drive և ԱՊՊԱ+»-ը տրամադրվում է հաղթողին իր սեփական տրանսպորտային միջոցի կամ սեփական տրանսպորտային միջոցի բացակայության դեպքում վերջինիս ընտրությամբ այլ անձի պատկանող տրանսպորտային միջոցի ապահովագրության համար՝ մեկ տարի ժամկետով, 5,2 մլն դրամ ապահովագրական գումարի սահմաններում:

3.8 Մրցանակները չեն կարող փոխարինվել դրամական համարժեքով:

3.9 Նվերների տրամադրման չափանիշները սահմանվում և որոշվում են Ընկերության կողմից՝ հաշվի առնելով Ընկերության ներսում գործող չափանիշներն ու իրավական կարգավորումները:

3.10 Հաղթող մասնակիցը պարտավոր է ստանալ իր շահումը/մրցանակը 30 օրացուցային օրվա ընթացքում:

3.11 Ընկերությունը կարող է Հաղթող մասնակցին հրավիրել լուսանկարահանման և հրապարակել լուսանկարները իր կայքում և սոցիալական ցանցերում՝ մասնակցի գրավոր համաձայնությունն ունենալու դեպքում:

3.12 Եթե Ընկերությանը չի հաջողվում կապ հաստատել հաղթող մասնակցի հետ 72 ժամվա ընթացքում, կամ եթե հաղթողը 30 օրացուցային օրվա ընթացքում չի կապվում Ընկերության հետ կամ չի այցելում Ընկերության որևէ սպասարկման սրահ, ապա մրցանակի տրամադրումը համարվում է չեղարկված՝ առանց փոխհատուցման ենթակա լինելու:

3.13 Ընկերության կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Հաճախորդի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Ընկերության կողմից:

3.14 Արշավին մասնակցելով՝ մասնակիցը տալիս է իր հստակ համաձայնությունը Արշավի շրջանակում իր կողմից տրամադրված անձնական տվյալների մշակման համար՝ Արշավի ընթացքը կազմակերպելու, վարելու և արդյունքները ամփոփելու նպատակով:

3.15 Կազմակերպիչը պարտավորվում է ապահովել Արշավի մասնակիցների անձնական տվյալների գաղտնիությունը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության։

3.16 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տեխնիկական խնդիրների, ինտերնետ կապի խափանումների կամ Հավելվածի հասանելիության սահմանափակման հետևանքով առաջացած խնդիրների համար։

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.silinsurance.am կայք կամ զանգահարել 060-54-00-00 հեռախոսահամարով։

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ -ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից։